

Ձեր անձերը մարքելով Հոգիին միջոցաւ՝ ճշմարտութեանը հնազանդելով, եղբայրսիրութեան մէջ անկեղծ ըլլալով, սուրբ սրտով մէկմէկ պինդ սիրեցէք։
Ա. Պետր. Ա. 22.

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ձեր անդամները անիրաւութեան գործիք ըլլալու միջոցաւ մեղքի, հապա Ձեր անձերը Աստուծոյ ընծայեցէք, որպէս թէ մեռեցնէրէն ողջնա՞ծ. եւ ձեր անդամները արդարութեան գործիքներ Աստուծոյ։
Հոովմ. Զ. 13.

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեկ ին տարեկան.—Յրանսա եւ Սուրիա 5 Ֆր. Պալքանեան երկիրներ 1 շիւ ուրիշ երկիրներ 1,50 շիւ
Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

Թիի 7

Գ. ՏԱՐԻ

20 ՕԳՈՍՏՈՍ 1927

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽԱՉԻՆ ՓԱՅԼՈՒՆ ՈՒԹԵՆԷՆ

(Շար. 6րդ. Թիւ. 5)

Բայց հիմա մեղքէ ազատուած եւ Աստուծոյ ծառաներ եղած՝ Ձեր պտուղը ունիք սրբութիւնով, ու վերջը յաւիտեական կեանք (Հոովմ. Զ. 22).

Անցեալ Թիւը հետեւեալ խօսքով կը վերջանար. «Խաչին լոյսովը դատապարտուած, բայց խաչեալին միջոցաւ մեղքէ ազատուած»։

Այս խօսքը լման նշանակութեամբը հասկընանք։

Խաչին մօտեցող իւրաքանչիւր ոք շնորհք ընդունած է, անոր մեղքերը շնորհուած են, սակայն մենք ոչ միայն շնորհեալ մեղաւորներ ըլլալու ենք, հապա ազատներ, վասնզի մեղքը իշխանութիւն մըն է որ ոչ միայն դատապարտութեան կը տանի, հապա որ կը շղթայէ իր ենթակաները։

Մեղքին դատապարտութենէն ազատուիլ չը նշանակէր անոր շղթաներէն բոլորովին ազատուիլ։ Շատ մը նորադարձներ եւ թեթեւ խորհող քրիստոնեաներ յաճախ սա սխալ ենթադրութեան մէջ կ'իյնան թէ ալ իրենք ազատեցան մեղքի իշխանութենէն։ Բայց երբ նորադարձ մը իր առաջին սիրոյ մակնիւթացութեան շրջանը կ'անցնէ, կը զարմանայ որ մեղքը դարձեալ նոյն գունագեղ վիճակով իր մօտը կը գտնուի։ Բայց վախճալու չէ անկէ, վասնզի մեղքը չ'մեռնի։ Երբ անքան շուտով չ'մեռնիր։ Անիկա Թող միտքը պահէ որ, իսրայէլ թէեւ եգիպտոսէն դուրս ելու, սակայն եգիպտոսի եւ քանանի միջեւ 40 տարուան փորձութեան եւ պայքարի կեանք մը անցուց. իւրաքանչիւր բոլոր

եւ ձոր պէտք էր պատերազմով գրաւուէր, իւրաքանչիւր քայլափոխ նոր պայքար կ'ենթադրէր եւ ուստի ես ալ ունիմ իմ Ամաղէկս եւ այլն թշնամիներս, — նախկին սովորութիւնները, սատանայական ունակութիւնները, մարմինին փափաքները, ներքին եսը, որոնք յաղթուելու են։ Աւշադրութիւն ըրէ՛. ասոնցմէ թշնամիներ կան, որոնք մինչեւ ցորդանան (Մահ) քեզի կ'ընկերանան, եթէ կարելի է նոյն իսկ հոն գրեզ խեղդամահ ընելու, բայց գիտցիր թէ յաղթութիւնը քուկդ է, ցաղթականին շնորհիւ։

Պօղոս կ'ըսէ ինքզինքն ի դժբախտ մեղքին մեռած սեպեցէք։ Ըսել կ'ուզէ, ելէ՛ք խաչեալին հետ Գողգոթան, հոն Անոր հետ խաչուեցէ՛ք (հաւատքով) եւ այսպէս իբրեւ խաչեալներ Տէրոջմով ապրեցէք (հաւատքով) Տէրոջը համար (հաւատքով, ... որ պիտի գայ... որպէսզի ձեզ Անոր (Աստուծոյ) դիմացը սուրբ ու անբիծ եւ անարատ կայնեցնէ. եթէ կ'ենաք հաւատքին մէջ հիմնուած եւ հաստատ առանց խախտելու Աւետարանին յոյսէն որ լսեցիք (Կող. Ա. 22-23)։ Վասնզի Անոր կողմէն խոստում կայ թէ, «Ան որ իր մէջ բարի գործ մը սկսեց մինչեւ ցիտուս քրիստոսի օրը պիտի կատարէ» (Փիլիպ. Ա. 6)։ Արդ հաւատքի կեանքը պայքարի կեանքն է, մեղքի, հին աղամին, հին ունակութեանց դէմ, որոնք մէկիկ մէկիկ պարտութեան մասնուելու են, մինչեւ ստացուածքին փրկութիւնը։

Ո՛վ նորադարձ, եթէ դարձեղ յետոյ պայքարի չսկսար, սխալ կ'ընես, պատրաստուէ եւ սկսէ սուրբ պատերազմին, ապա թէ ոչ մեղքը դրան քով պառկած է: Ո՛վ հաւատացեալ, եթէ պայքարելէ յոգնած ես ֆիշդ այս օր դարձեալ սկսէ, վասնզի վերջնական յաղթութիւնը քուկդ է, ու յաղթութեան գաղտնիքը յարատեւ պայքարն է: Տէրոջը պատիւ չբերող հին ունակութիւնները խաչը հանէ, իւրաքանչիւր յաջողութեան՝ ոտքդ աւելի հաստատած, հաւատքով Տէրոջը վստահած աւելի մեծ թափով յարձակէ եսին վրայ, առանց խնայելու մեղքին, առանց աչք գոցելու պզտիկ թերութեանց, մինչեւ որ քու Տէրդ իր գոհունակութիւնը յայտնէ քեզի իր Հոգիովը:

Այս փառաւոր ազատութիւնն է որ կը ստանանք դատաւարտեալներս խաչեալէն:

— Գ —

Խաչին լուսարձակը մեզի կը ցուցնէ ոչ միայն անցեալն ու ներկան այլ նաեւ ապագան:

(ա) Խաչին լուսարձակովը կը տեսնենք ապագայ յաղթութիւնը: Քրիստոսի բոլոր խօսքերը ապագայի մասին քաջայերական են: Պետրոսին կ'ըսէ դուն հեփաս պիտի ըսուիս, այս վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս: Պողոսին համար կ'ըսէ, զանիկա ըստիր աման մը պիտի ընեմ: Բոլոր աշակերտներուն կ'ըսէ, ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի վերջը: Սրտերնիդ չխռովի... խաղաղութիւն կը թողում ձեզի, ի՞նչ խաղաղութիւնս կուտամ ձեզի: Իրեն հաւատացողներուն համար կ'ըսէ որ այս նշանները անոնց հետ պիտի երթան. իմ անուանուս դեւեր պիտի հանեն, նոր լեզուներ պիտի խօսին, ձեռքերնին օծեր պիտի բռնեն, ու եթէ մահառիթմ դեղ մը խմեն, իրենց չպիտի վնասէ, հիւանդներու վրայ ձեռք պիտի դնեն ու անոնք պիտի առողջանան:

Քրիստոսի խաչին առջեւ պարտուող մը զօրաւոր կ'ըլլայ թէ իր անձին դէմ թէ կրնայ ազդել ուրիշներու վրայ:

Անիկա յուսալից յառաջ կ'երթայ, վասնզի իր բոլորտիքը պատնէշ քաշուած է երկնաւոր հայրական ձեռքերու միջոցաւ, (քեզ անիծողները պիտի անիծեմ) չի վախնար նսակիմներէն, թէեւ կը տեսնէ թէ անոնք իրմէ աւելի մեծ ու զօրաւոր են, չի վախնար ասորական զինուորներէն, վասնզի գիտէ թէ իրեն հետ եղովները աւելի շատուոր են, չի վախնար Հերովդէսի բանտէն, վասնզի Տէրոջը հրեշտակը կրնայ շղթաներն ալ քակել, բանտին դռներն ալ բանալ: Զվախնար իր թշնամիներէն, որոնք երդում ըրած են չուտել եւ չխմել մինչեւ որ զինքը չսպաննեն, վասնզի խոստում առած է վերէն թէ կայսրին

առջեւ ալ պիտի ելլէ: Զվախնար եւ ոչ մէկ բանէ եւ թէեւ ամէն օր կ'սպաննուի եւ մորթուելու ոչխարի պէս կը սիւլուի, այս ամէն բաներուն մէջ ալ աւելի յաղթող կ'ըլլայ Անով որ զինքը սիրեց: (Հռովմ. Բ. 36-37).

Պողոս՝ ատով ալ չբաւականանար, հապա կ'աղաղակէ, գոհութիւն Աստուծոյ որ ՄԻՇՏ յաղթող կ'ընէ մեզ քրիստոսով, ու զինքը ճանչնալուն հոտը մեզմով յայտնի կ'ընէ ամէն տեղ, (Բ. Կորնթ. Բ. 14): Վերջին թշնամին, որ պիտի խափանի մահն է, (Ա. Կորնթ. ԺԵ. 26): Այո՛, մահն ալ, որ ամբողջ մարդկութեան (գրեթէ առանց բացառութեան) ամենուն տեսակ մը սարսափ կ'ազդէ, խափանուած է:

Խաչին լոյսովը մահուան առեղծուածն ալ անկէ եկող վախի զգացումն ալ լուծուած են: Աւազակը հաւատաց ու փրկուեցաւ, մահուան սարսափներն ալ ցնդեցան:

Պատերազմի դաշտին վրայ զինուոր մը նստած էր իր խրամատին մէջ՝ եւ դիրքի կը սպասէր, յանկարծ լսեց իր քովի ենթախրամէն եկող աղթման ձայն մը, որ սակայն հռնդիւնի մը նման դուրս կուգար վիրաւորին կողմը: Զինուորը անմիջապէս ձայնին կողմը վազեց, խորհելով վերջին օգնութիւն մը ընել մահամերձին: Նա կ'աղթէր սրտաբուռով: Երիտասարդ զինուորը որ մահէն շատ կը վախնար, ծռելով հարցոյց մահամերձին. «եղբայր բանով մը կրնամ օգնել քեզի»: Մահամերձը աչքերը բացած փայլուն դէմքով մը եւ ուրախ պատասխանեց. «քեզի պէտք չունիմ, ես օգնական ունիմ, եղբայր շնորհակալ եմ»: Զինուորը, որ մահուանէ սաստիկ կը վախնար աւելի սարսափած գրեթէ ինկաւ մահամերձին վրայ աղաղակելով՝ «եղբայր ներողամիտ եղիր որ քու մահուանդ վայրկեանին զքեզ անհանգիստ կ'ընեմ, բայց ըսէ՛՝ մի՞նչ դո՛ւն կրնաս օգնել ինձի»:

Տկար եւ սակայն հնչուն ձայն մը կուգար անոր ականջին, այո՛ քեզի ալ օգնող կայ, Յիսուս — խաչեալ Յիսուս — ա՛ն իմ Սուրբ Գիրքս ու կարգա, հոն պիտի գտնես խաչեալ Յիսուսը: Մահուանէ չվախցող սոյն զինուորը մեռաւ, միւ եււոյն ատեն օգնելով ընկերոջն ալ որու սրտէն քիչ օրեր յետոյ փարատեցան մահուան արիաւիրքները:

Խաչը, միայն խաչը մահուան արիաւիրքներէն կ'ազատէ մարդս: Հաւատացեալը կ'ըսէ մեռնելու ու Քրիստոսի հետ ըլլալու փափաքն ունիմ (Փիլիպ. Ա. 23):

Խաչին լոյսովը մահուան գործողութիւնն ալ լուսաւորուած է, ամէն ինչ լոյս է, ալ վախ չկայ: Մահուան արիաւիրքը բոյս մըն է, որ խաչին ճառագայթներուն տակ չկրնար բուսնիլ ու աճիլ:

Խաչին լոյսը այսպէս զմեզ մինչեւ երկինքի դռները կ'առաջնորդէ: Ստեփանոս երկինքը բացուած փրկիչը կը տեսնէր, որ թեւերը պարզած կը սպասէր զինքը ողջունել:

Յաղթուն թիւն ամենամեծ յաղթուն թիւն, զոր խաչեալը շնորհած է իրեն հաւատացողներուն, զոր կրնանք տեսնել բուն իսկ իր խաչին լոյսովը:

Հաւատացեալը չկրնար մոռնալ թէ իր Տէրը խոստացած է վերադառնալ աշխարհի վրայ գալիք սարսափներէն — մեծ նեղութենէն — առաջ եւ այսպէս ինքզինքը կը պատրաստէ լնոր հանդիպելու օդին մէջ, այս պատճառաւ կը սպասէ ու կը հսկէ, միեւնոյն ատեն ինքզինքը կը սրբէ. կը հսկէ լալտերն ի ձեռին իր Տէրը դիմաւորելու եւ այնպէս յաւիտեան լնոր հետն ըլլալու: Դիտէ «Արթուն կեցէք» ի նշանակութիւնը:

(բ) Խաչին յուսարձակովը կը տեսնենք ապագայ հայրենիքը: Հաւատացեալին բաղաբաղանդութիւնը երկինքն է, ուրկէ փրկին կը սպասէ, այս խոնարհ մարմինը իր փառաւոր մարմինին կերպարանակից ընելու համար վասնդի որքան որ այս վրանի նման երկրաւոր տանը մէջ կը գտնուի, կը հառաչէ իր երկնաւոր բնակութիւնը հագնելու փափաքելով:

Յիսուս Քրիստոսի վերաւոր ձեռքերը հեռացուցին ամէն ինչ որ չարչարող էր, տանջող էր, զարհուրեցուցիչ էր, ու անոնց տեղ պարգեւեցին յաւիտենական կեանքը երկնային հայրենիքին մէջ:

Ինչ փառաւոր է այդ հայրենիքին նաւահանգիստը, ամենամոր սխտէմով շինուած, ամենամեծ նաւահանգիստէն շատ աւելի մեծ, ուր բազկատարած փրկիչը պատրաստ է, ընդունելու իրենները: Յովհաննէսի մը յոգնած գլուխը դարձեալ իր կուրծքին վրայ հանգեցնելու, Մագաղանացի Մարիամի մը յաւիտեանս հանգիստ շնորհելու:

«Տէրոջն հետ յաւիտեան»

Ինչ մխիթարութիւն . . .

Օ, քանի յոգնածներու, հաւաքողներու, հայրենիք եղած է այն ու պիտի ըլլայ լոյսը այն մեծ բազմութեան, «որոնք իրենց հանդերձները լուացին ու զանոնք գաւառակին արիւնով հերմկացան»: Անոր համար Աստուծոյ ամոռին առջև պիտի ըլլան, ու իրեն պիտի ծառայեն ցորեկ ու գիշեր իր տաճարին մէջը եւ ամոռին վրայ նստողը իր վրանը պիտի տարածէ անոնց վրայ: Այնուհետեւ ոչ պիտի անտեսենք եւ ոչ ծարաւին, ոչ ալ արեւը կամ մէկ տաքութիւն մը անոնց վրայ պիտի իջնայ: Վասնդի Գառնուկը որ ամոռին մէջն է՝ պիտի հովուէ զանոնք, ու կենդանի ջուրներու աղբիւրները պիտի առաջնորդէ զանոնք, եւ Աստուծոյ լոյսը արցունքները պիտի սրբէ անոնց աչքերէն»: (Յայտ. Է. 15-17).

Խաչէն հաւագայթող լոյսը քեզի կը ցուցնէ բոլ յաւիտենական հանգիստը ո՛վ հաւատացեալ,

ուստի երգէ.

Ո՛վ իմ հոգիս, ուրախ եղի՛ր,
Առջեւդ փառք կայ անդադար,
Վըսեմ կոչումդ լաւ հանգիստ,
Մարմնոյ վիշտէն ալ մի՛ վախնար:

ՎԵՐՋ

ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱԽԱԿ

Վեր. Ա. 2. Եղոյեան

Ընթերցող, Աստուծոյ զաւակ մըն ես: Ոչ ոք կրնայ երկինք երթալ առանց Աստուծոյ զաւակ ըլլալու, վասնդի երկինքը Աստուծոյ տունն է, եւ Անոր զաւակներուն բնակարանը. Յովհ. 3. 3-5:

Բայց ոչ ոք կրնայ Աստուծոյ զաւակ ըլլալ, առանց Աստուծոյ ծնանալու: Ասիկա պարզ է, չէ՞: Մեզմէ ամէն մէկը իր հօրը եւ մօրը զաւակն է, վասնդի անոնցմէ ծնած է: Այսպէս է Աստուծոյ զաւակ ըլլալն ալ: «ՊէՏՔ է Զեջի նորէն ծնանիլ» Յովհ. 3. 7:

Ինչպէս Հօրմէն ծնանիլ: Ներկողեմոս ալ աս հարցումը ըրաւ մեր Տէրոյ — «Ինչպէ՞ս կրնայ մարդ մը նորէն ծնանիլ»:

Ընթերցող, պատասխան տալէ առաջ քեզի երկու բան ըսեմ. 1. որ երկրորդ անգամ ծնանիլը հոգեւոր է, եւ ո՛չ մարմնաւոր կամ մարմինով, եւ 2. որ էական չէ գիտնալ թէ մէկը ինչպէս կը ծնանի նորէն: Էականը վերստին ծնանիլն է, ասոր եղանակը կամ կերպը գիտնալ թէ չէ: Մենք մեր ծնողքներէն եղանք առանց գիտնալու թէ ինչպէս: Եւ տակաւին ոչ մէկ մարդ կարող է բացատրել թէ ինչպէս մարդ մը գոյութիւն կ'առնէ եւ աշխարհ կուգայ: Բայց ամէն մարդ գիտէ թէ ինքը ծնած է եւ կ'ապրի: Այս է էականը, եւ այս բաւական է: Այսպէս է հոգեւորապէս ծնանիլն ալ, զոր Սուրբ Գիրք կը կոչէ Աստուծոյ ծնանիլ կամ Հոգիէն ծնանիլ, կամ վերէն ծնանիլ եւ կամ նորէն ծնանիլ: Ասոր համար Տէր Յիսուս կ'ըսէ — «Պէտք է ձեզի նորէն ծնանիլ»: Յովհ. 1. 13, 5. 3, 5:

Գիտցի՛ր, ընթերցող, որ ինչպէս կարելի է երկու անգամ ծնանիլ, անանկ ալ կարելի է երկու անգամ մեռնիլ:

«Երկրորդ Մահ» ալ կայ — Յայտ. 2. 11, 20. 6, 14, 21, 8: Թէ ինչ է «Երկրորդ Մահը», այսինքն երկրորդ անգամ մեռնիլը, կարդա Յայտ. 20. 14 համարը, որ կը վերջնայ ըսելով «ասիկա է երկրորդ մահը», այսինքն «կրակի լիճը» — ԴժՈՒԽՔԸ: «Երկրորդ մահը» ԴժՈՒԽՔ ԵՐԹԱՆ է: Մարդ մը երբ առաջին անգամ

մեռնի, գերեզման կը դրուէի, եւ եթէ (Աստուած չընէ) երկրորդ անգամ մեռնի Դժոխք կը ձգուի: «Ասիկա է երկրորդ մահը»:

Որո՞նք կը մեռնին երկու անգամ, եւ կերթան դժոխք: Կարգա՝ Յայտ. 20, 14, 15, եւ 24, 8: Յայտնապէս՝ անգեղջ, անապաշխար եւ անդարձ մեղաւորները, որոնց անունները Կենաց Գրքին մէջ գրուած չի գտնուիր: Ընթերցող, մի դուցէ՛ դուն այսպէս ես տակաւին: Դուն քեզի հարցուր — «Ո՛հ, Կենաց Գրքին մէջ իմ անունս գրուած կա՞յ»:

Եւ որո՞նք կը մեռնին միայն մէկ անգամ որ թէպէտ կը դրուին գերեզման, բայց չեն մեռնիր երկրորդ անգամ, վասնզի «ասոնց վրայ երկրո՞ւ Մահը իշխանութիւն չունի» — Յայտ. 20, 6 2. 41: Մեր Տէրը բաւաւ, «Ես եմ յարութիւնը եւ կեանքը, ան որ ինձի կը հաւատայ, թէ եւ մեռ ի, պիտի ապրի» — Յովհ. 11, 25: Այսինքն, Յիսուս Քրիստոսի հաւատացողը թէ եւ մեռնի առաջին մահը, բայց պիտի չմեռնի երկրորդ մահը՝ դժոխքը, հապա «պիտի ապրի» յաւիտեական կեանքը, երկինքը:

Ահա՛ երկու բան կարելի է — 1. Մէկ անգամ ծնանիլ եւ երկու անգամ մեռնիլ, եւ 2. երկու անգամ ծնանիլ, եւ մէկ անգամ մեռնիլ: Ո՞րն է քու կարելիութիւնդ, սիրելի ընթերցող: Եթէ միայն մէկ անգամ ծնած ես, եւ զուցէ երկրորդ անգամ չծնանիս, ուրեմն առջեւդ երկու մահ կայ մինչեւ ձգուիս կրակի լիճին մէջ: Իսկ եթէ մէկը նորէն ծնած է, անիկա վախ չունի երկրորդ մահէն, եւ երկինքի ճամբուն վրայ կը դառնուի: Արդարեւ «երանելի եւ սուրբ է» ասանկ մէկը, եւ Տէր Յիսուս կ'ըսէ ասանկներուն — «Ուրախացէ՛ք որ ձեր անունները երկինքը (Կենաց Գրքին մէջ) գրուած են»։ Դուզ. 10 20:

Ընթերցող, անշուշտ դուն ալ կ'ուզես ունենալ եւ վայելիլ այս ուրախութիւնը, եւ ըլլալ «երանելի», երջանիկ: Բայց ասիկա կ'ըլլայ վերստին ծնունդով: Եւ այս կարելի է միայն հաւատաւով Յիսուս Քրիստոսի, եւ ընդունելով զԱյն: Կ'աղաչեմ, ուշադրութիւնով կարդա Յովհ. 1, 12, 13: Մի՛ ըսեր թէ չես կարող հաւատալ, վասնզի ՊԻՏԻ ԿՐԻՍՏՈՍ եթէ արդարեւ տեսնես վստահութեամբ ու սրտանց ուզես անկէ ազատիլ եւ ապահով ըլլալ: Ո՛չ ալ ըսէ թէ չես զիտեր ի՞նչ է քո գոհութիւն Տէր Յիսուսը, վասնզի զիտես ե՛րբ քո գոհութիւն Անձ մը ՈՐ ԿՐԻՍՏՈՍԻ ԲԵՉ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԶՍՄԱՐ ԻՐ ԿԵԱՆՔԸ ՄԱՅՈՒՆՔԻՆ ԱՅՈՒՆՔԻՆ:

Նիկողոմոս հարցուց թէ կարելի՞ էր, կամ ի՞նչ պիտի ըլլար, որ քեզի յիշուի եւ մարդու մը նորէն ծնանիլ: Տէր Յիսուս ասիկա չբացատրեց անոր: Բայց շատ ար հաւատաց Անոր որ պիտի բարձրանար քառուստ քառուստ Անոր որ պիտի բարձրանար քառուստ քառուստ: «Ինչպէս Մովսէս անապատին

մէջ օձը բարձրացուց, այնպէս պէտք է որ Որդին Մարդոյ բարձրանայ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտեական կեանք ունենայ»:

Դուն ալ այսպէս ըրէ, եւ հաւատքով ընդունէ Յիսուս Քրիստոսը, իբր քու Փրկիչդ եւ Տէրդ, եւ ահա նորէն ծնած՝ Աստուծոյ զաւակ կ'ըլլաս:

ԵՐԿՈՒՔՆ ԱՆ ԲԺՇԿՈՒԱԾ

Խիստ տաղանդաւոր քարոզիչ մը երկար տարիներ քարոզած էր խաչին վարդապետութիւնը, զայն մասնաւորապէս շեշտելով եւ հետեւաբար օրհնութիւն տարածելով իր շուրջը: Անոր մէկ բնական հետեւանքն էր սատիկ Թշնամութիւն կարգ մը անհամեմատ կողմէ:

Անոր հակառակորդներէն մին էր ազատամիտ պալան մը որ շատ ճամբորդութիւն ըրած եւ շատ բաներ տեսած էր: Այս պարոնը այնքան կ'ատէր Աստուծոյ խօստեսած էր: Այս պարոնը այնքան կ'ատէր Աստուծոյ խօստէն ճշմարտութիւնը որ երկար ատեն եկեղեցին սուր կ'ուրեքէր: Կիրակի առաւօտ մը անիկա խորհեցաւ անգամ մըն ալ երթալ եւ լսել յիշուի քարոզիչը ու տեսնել Թէ արդեօք անոր քարոզները քիչ մը աւելի մեղմ շեշտ մը ստացած էին ու կարելի՞ էր քիչ մը աւելի մոտիկ ընել ու հանդուրժել անոր խօսքերուն: Ուրեմն եկեղեցի գնաց: Այդ առաւօտ քարոզիչը խօսեցաւ «Նեղ ճամբուն» վրայ: Առանց Աստուծոյ խօսքէն շեղուի մոլորութիւն առջեւ ներկայացուց նեղ ճամբան: Աստուծոյ խօսքին վրայ ոչ բան մը աւելցուց եւ ոչ ալ պակսեցուց: Անոր քարոզին բնարանն էր Յիսուս Քրիստոսով նոր տեսլաճառ մը Թէ «Մերժուած Աստուծէն»: Անիկա իր այս բնարանին վրայ խօսեցաւ զօրութեամբ եւ ոչ Թէ դպիրներուն նման: Հակառակորդ պարոնը սկսաւ խորհիլ: Արդեօք իր լսածը ճշմարտութիւնն էր: Եթէ քարոզիչին բնարանը ճշմարտ էր, իր վիճակը ի՞նչ պիտի ըլլար: Եթէ անոր խօսածը միայն խօսք ու երեսակայութիւն էր, պէտք չէ՞ր զայն խարաղանով քննել վար իշեցնել իր այդ յանդգնութեան հայտարարութիւնը որով մարդոց խիղճերուն վրայ այդ կարգի բեռներ կը դնէր: Այս խորհուրդները ալեւս չը հեռացան անկէ: Իրեն հետ գացին տուն, տունէն իր գործի տեղը եւ անկէ ալ իր հաճոյքներուն եւ զբաղումներուն: Ուր որ երթար ու կենար սարսափելի չայն մը կը փախար՝ «Քարոզիչին բնարանը ճշմարտ է Թէ սուս»:

Որքա՛ր ալ որ կը փախարէր ալաւիլ այդ ձայնէն ստիպուած էր անընդհատ լսել զայն, եւ ոչ միայն այսչափ ալ օր բաւ օրէ աւելի բարձր, աւելի սուր եւ աւելի ստիպողական կը հնչէր ան իր ականջին ու նոյն իսկ կը սպառնար դառնացնել իր կեանքի բոլոր ուրախութիւնը: Վերջապէս որոշեց ուղղակի քարոզիչին երթալ եւ անոր հարցնել Թէ ինք իրապէս համոզուած էր իր քարոզովին, եւ զնաց:

«Պատուելիք», բառ հակառակորդը, յայտնապէս յուշուած եւ որոշ շեշտով մը: «Ես ալ Ձեր ունեւորդն եմ»:

րուն մէջ կը գտնուէի երբ բեմէն փրկումեան միակ ճամբան ներկայացուցիք : Պէտք է խոստովանիմ թէ իմ հանգիստս վրդովեցիք եւ ուրեմն ստիպուեցայ գալ եւ հարցնել Ձեզի որ Ձեր ձեռքը Ձեր խղճին վրայ դրած ինծի ըսէք թէ Ձեր քարոզածը կրնա՞ք վաւերացնել բարձրագոյն հեղինակութեամբ մը թէ միայն պարապ վախերով սարսափեցուցիք Ձեր ժողովուրդը» :

Քարոզիչը խիստ զարմացած՝ կտրուկ կերպով պատասխանեց՝ «Առաւելոյ խօսքը խօսեցայ, եւ ուրեմն բացարձակ ճշմարտութիւն» :

«Աստուած իմ», գոչեց հիւրը ահաբեկած, «եթէ այդպէս է, պատուելի, մեր վիճակը ի՞նչ պիտի ըլլայ» :

«Մէջք», խորհեցաւ քարոզիչը, եւ սկսաւ վարանիլ, սակայն այդ տարօրինակ «ՄԵՐ» բառին ազդեցութիւնը ուժգնօրէն իր սիրտէն հեռացնելով՝ սկսաւ փրկումեան ճամբան ցուցնել անոր եւ զայն սպաշխարութեան եւ հաւատքի հրաւիրել :

Կարծես թէ հիւրը պատուելիին խօսածէն վաճակ մը անգամ ջէր լսէր եւ ասուն յագումով մը զայն ընդմիջեց բացազանքելով, պատուելի, եթէ Ձեր քարոզածը ճշմարիտ է, խնդրեմ, ըսէք, ՄԵՆՔ ի՞նչ պիտի ընենք :

Քարոզիչը սկսաւ ընկրկիլ սարսափաշար : «Մենք», կը հնչէր իր սրտին մէջ, ինչո՞ւ մենք : Եւ իր սրտին մէջի ասուն անհանգստութիւնը եւ շփոթութիւնը նուաճելու եւ ծածկելու անյաջող փորձեր ընելէ յետոյ՝ կրկին սկսաւ յորդորել իր հիւրը :


Սակայն անոր աչքերը արտասանքով լեցուեցան ու ձեռքը ձեռքին զանեղով այնպէս աղիողորմ շեշտով մը աղաղակեց որ քարերու անգամ գումը կարելի էր շարժել, պատուելի, եթէ Ձեր քարոզածը ճշմարիտ է, վա՛յ մեզի, մենք կորսուած ենք :

Պատուելին դաւիափար, ամբողջ մարմինը դող ելած քարացած կը կենար : Ջարհոսքի արտայայտութեամբ մը աչքերը վար բեռեւած տեղէն ջէր շարժեր : Սակայն յանկարծ ինկաւ իր հիւրին գիրկը եւ սաստիկ ճնշուած հաւաքեց, «բարեկամ, հողի ու մոխրի վրայ իյնանք եւ աղօթենք պաշտօնագին» :

Գրկախառն գետին կ'իյնան, ծունկի վրայ կ'աղօթեն միասին, եւ հիւրը կը հեռանայ արտօրնօք :

Յաջորդ կիրակին կը ծանուցուի թէ քարոզիչը անհանգստութեան պատճառով պիտի չկարենայ խօսիլ : Շարժմը մը յետոյ նոյն ծանուցումը կը կրկնուի : Երրորդ կիրակին քարոզիչը կրկին բեմ կը բարձրանար գունատ եւ դաւիափար՝ սակայն անսովոր փայլ մը իր աչքերուն մէջ : Եւ այն ժողովուրդը յետին ծայր յագումած անակնկալօրէն կ'իմանար թէ իր քարոզիչը տակաւին նոր մտած էր Նեղ Դիմէն ներս : Ան իր հակառակորդ հիւրին հետ միասին գացած էր մեծ բժշկին տեսնելով իր հիւանդութիւնը եւ դարման վնասելով Անիէ. եւ Յիսուս, մեծ բժիշկը, ԲԺՇԿԱՄ ԷՐ ՆԵՐԿՈՒՓՆ ԱՆ :

Թարգմ. Գեորգիանի



ԹՈՒՐԿԵՐԷՆ ՄԱՍ

ՊԱՇԿԱՆԱՐԸՆ ԳՈՒՍՈՒՐԼԱՐԸ

Մատթ. 18 ինճի Պապ

Պիգ պիրատէր վէ հէմշերէլէրիմիզին գուսուրլարը իլէ մուգատտէս մուամէլէ էթմէյի էօյրէնմէլիյիգ : Պիգ անլէրին գուսուրլարընը գալմա կէթիւրէճէք եէրտէ, քի օրատա ումումէն պիր կիւնանըն իւզէրինէ տահա չօգ կիւնանլար գամմ օլուր վէ անըն սէպէպինտէն չօգլար նափաք օլուրլար, քեանինլէր հալընտա օլ գուսուրլարը մագտիսէ, Ալլահըն հուգուրունա կէթիւրմէլիյիգ, Իպր. 12. 14-15 : Էյէր Իսրայէլտէ պիր քեանին պիրատէրինին կիւնանընը մագտիսէ կէթիւրէճէք եէրտէ օրատա կէթիւրէճէք օլա խտի, էօլիւմէ միւսթահազգ պիր կիւնան իշլէտի վէ էօլմէլի տիր տէյէրէք անը թաշլարլար իտի :

Էյէր պիրատէրին սանա գարշըր կիւնան իշլէրսէ անա սիւքիւթ էթմէ վէ պաշգալարա անըն հազգընտա սէօյլէմէ, իլլա սէն պիրատէրինի թազլը Էյլէ վէ օ սէնի տինլէր իսէ անըն գուսուրունու պաշգալարա գիքը Էթմէ, Ղեւի, 19. 16-17 : Էյէր պիրատէրինտէ պիր գուսուր կէօրիւր իսէն վէ պիր տիկէրիտէ ալնի գուսուրու կէօրմիւշ իսէ, օ զէման սիգ պիրատէրինտէ օլան թէօքէզ հազգընտա տուա էթմէք իւզրէ պիրլէշին օ խաթայը մագտիստէն պաշգա պիր եէրէ կէթիւրմէլին վէ օրատա օլ պիրատէր իշիւն նուր վէ խէլաս թալէպ Էյլէյին, զիրա Մատթ. 18, 19 տա քի շու ալէթ «Միգտէն իքի քիշի եէր իւզէրինտէ հէր հանկը շէյի տիլէմէք իշիւն իթթիֆազ էտէրլէրսէ անլէրէ սէմավաթտա օլան փէտէրիմ թարաֆընտան իհսան օլունաճագ տըր» պու մանատա անլաշըրըր : Հիշ սէն պիրատէրին իլէ պու մանատա իթթիֆազ Էյլէտի՞նմի : Իշլթէ քեանինլէր պէօյլէ էտէրլէր :

Մատթ. 18. 23-25 տէքի թէմսիլէ կէօրէ Էյէր պիգ պաշգալարըն գուսուրլարընա գարշըր մէհրամէթսիգ պուլունուր իսէք տէյիլ սաթ կիւնանլար աֆվլըղընը գալ էթմէմիգ միւմէին տիր, հաթթա Ալլահ քէնտիսի օլ աֆվլըղը պիգտէն կէրի ալըր : Պու մէհրամէթսիգ գուլուն պէօյիւք պօրճունու էֆէնտիսի քէնտինէ պաղըշլամըր խտի, լաքին օլ գուլ քէնտի գափու եօլտաշընա գարշըր մէհրամէթսիգ պուլունտուղու իշիւն աֆվլըղը անտէն կէրի

ալընտը վէ պիւթիւն պօրճու անըն իւզէրինէ կէրի գօնուլտու : Պու եօլտա չօգ քիմսէլէր բունտա պիր աղըրլըգ ալթընա տիւշէրլէր վէ մահպուսիյէթէ տիւշար օլուրլար, նիչէ տէֆա Ֆիզիքի սուրէթտէ տախի տէրունի գարանլըգ իշինէ տիւշէրլէր վէ նէ իշիւն օլտուղունու պիւմէղլէր : Իշթէ Մատթ. 18 ինճի պապտա պու կիպիւնէր վէրիւն ճէվապ :

1. Պիլի՞րմիսին Ալլահ քի՞մլէր իւն ալազասըն քէսէր, օ քիմսէլէր իւն քի պաշպալար իւն սուլի օլմագ իսթէմէղլէր : Մատթ. 3. 24 տէ էօյլէ քիմսէլէր կէօրիւյօրուգ քի Ալլահ անլէրի հուղուրունտան կէօնտէրի-յօր վէ կիթ տէյօր : Պիգ հիշ պիր վազթ Ալլահ իւն միւշարէթէթտէ պուլունամայըգ էյէր պի-րատէրլէրիմիգ իւն օլան ալազամըգ կիւնահ սէպէպինտէն պօղուլմուշ իսէ :

2. Պիլի՞րմիսին պիր քիմսէն ին հա-յաթը նէ եօլտա չէօլէ վէ գօրագ եէրէ թահվիլ օլուր : էյէր պիրատէրինէ զուլմ էտէր իսէն «Պէնի Յուդայա էթտիքլէրի զուլմ սէպէպինտէն Մըսըր վիւրան օլաճագ վէ Եղովմ գօրագ չէօլ օլաճագ», Յովէլ 3. 19 :

3. Պիլի՞րմիսին քէլամ քիմլէ՞րէ Ալլահը ունուտանլար թէսմիյէ էտիյօր, (օղուլալըմ Մէգ. 30. 19-22 յի) «Աղընը քէմ-լիյէ թէսլիմ էթտին, տիլին հիւն թէրթիպ էտէր : Օթուրուպ գարընտաշընա գարշը սէօյ-լէրսին, վալիտէնին օղունա լֆթիլա էտէր-սին : Պունլարը էթտին վէ պէն սիւքիւթ էթ-տիլիմտէն, պէնի աշիյլէ քէնտին կիպի զանն էթտին, սէնի թէքտիր էտիպ՝ էթտիյին շէյլէ-րի կէօղլէրիյին էօնիւնէ թէրթիպ էտէճէյլիմ : էյ Ալլահը ունուտանլար շիմտի պունու ան-լայընըգ, օլմայա քի սիգի փարէլէյէյիմ՝ վէ գուրթարըճը պուլունմայա» : Պիր պէրատէրին գուսուրլարընր պաշգալարա պիլա մէրհամէթ նազլ էթմէք քի անլէրտէ պիգիմ կիպի մէրհա-մէթսիգ տիրլէր, պու հիւքմ էթմէք տիր, վէ պու հիւքմսիւգ գալմայաճագ տըր, Մատթ. 7. 1 :

4. Պիլի՞րմիսին մամուր օլմանըն եօլու նէ՞ տիր. «Հագգարըղըգ իւն պաղա-տըղըն քիմսէլէրի չէօգէսին, պօյունտուրու-ղուն պաղալարըն կէվշէտէսին, էգտիյին քիմ-սէլէրի ազատ էտիպ հէր աղըրլըգ տէֆ էտէ-սին . . . օլ վազթ նուրուն սապահ կիպի աշըլաճագ վէ սըհիէթին չապուգ հասըլ օլա-ճագ . . . օլ վազթ չաղըրաճագսըն վէ Եհովա

սանա ճէվապ վէրէճէք, եարտըմ իշիւն ֆէր-եատ էտէճէքսին վէ Օ իշթէ հագըրըմ տէյէ-ճէք տիր . . . վէ Բապա տաիմա սէնի իրշատ էտէճէք վէ ճանընը գօրագըղըտա տօյուրաճագ վէ սէնին քէմիքլէրինի զուլվէթլէնտիրէճէք տիր . . . Եսա 38. 6-11, (Ալմանճա թէրճէմէտէ).

Պօղոս ընսուլ Բօմ. 6, 13 տէ Բօմալըլարա շէօյլէ եագըյօր. «Աղանըղը հագգարըղըն ալէթլէրի օլարագ կիւնահա թէսլիմ էթմէ-յինիգ, ամմա քէնտիլէրինիգի էօլիւլէրտէն հա-յաթ պուլանլար կիպի Ալլահա վէ ազանըղը սալահ ալէթլէրի օլարագ Ալլահա թէսլիմ էտինիգ : Սէնին կէօղիւն գուլաղըն վէ տիլին Ալլահըն սալահ մէլէքիւթիւնիւն գէմինտէ եայըլմասը իշիւն Ալլահա ալէթլէր օլմագ կէ-րէք տիր, տէյիլ քի տիւշմէնէ ալէթ օլարագ, հագգարըղըն մէլէքիւթիւնիւն իլէրի կէօթիւր-մէյէ խըղմէթ էյլէյէ :

«Պիգ թէնէ պօրճու տէյիլիգ» Բօմ. 8-12. պու տէմէք տիր քի պիգիմ պիրատէրլէրիմի-տէ հալա թէնճէ օլան շէյի պէսլէմէլի տէյի-լիգ, ամմա թաշըմալըյըգ, գիրա պիրատէ-րիմիգէ գարշը մէրհամէթսիգ մուամէլէմիգ անը իսլահ էթմէգ, իլա անը տահա տէրինէ տիւշիւրլէր :


Լիօն

Միւլթ. Ե. Պ.

ՃԵԼԱԼ

Հագիգի պիր քրիսթիանըն սիմասը սէմա-տան գէմինէ եէնի էնմիշ կիպի տաիմա փար-լամալը, Ալլահը կէօրմիւշ վէ մուգատտէսլէր իլէ ալազա էթմիշ, տիւնեայը վէ անտէ պու-լունան հէր շէյի քեամիլէն թահգիր էթմիշ վէ էպէտի օլանը գըյմէթի թութմուշ պիրի կիպի : Յիսուս Քրիստոսըն ճէլալը, անըն մու-հապպէթինին ճէլալը, անըն հիլմիյէթի, անըն սալահը, անտէ զիյա վէրմէլի : Միւմինին սի-մասընտան, կէօղլէրինտէն, գօնուշուղունու թարգընտան, ամէլլէրինտէն ատէմլէր հագի-գաթէն Յիսուս Քրիստոսուն սուրլ թինի թա-շըյօր, պէլլի տիր քի օ Ալլահ իւն վէ Յիսուս Քրիստոս իլէ չօգ ալազա էտէն պիւրի տիր տէ-մէլիլէր :

Թէրճէմէ.



ԳԻՄ ՍԷՄԱՅԱ ԿԻՏԵՊԻԼԻՐ

— 000 —

Պու սիւալ էտիլտիքտէ ֆարգլը ճեկապ-
լար վերիլիւր, նիչելէր տէր էյէր ագլը պաշըն-
տա եաշար իսէն : Պու կիպիլէր ախլազի պիւր
էօմը կէշիւրէրէք սէմայը զազանմաղը մէմուլ
էտէրլէր :

Էօյլէ իսէ Յիսուս նի՞չուն էօլտիւ, էյէր
պիւր քիմսէ ախլազիլէթի իլէ սէմայա նաիլ
օլապիլիւր իսէ : Օլ զէման սէմալի փէտէր
պու գուրպանը կէթիւրմէյէճէք վէ պիւրիճիք
օղլունու էօլիւմէ թէսլիմ էթմէյէճէք վէ Յի-
սուս տախի քէնտի գանընը տէօքմէյէճէք
իտի : Պու շէյլէր ապլա լաղըմ օլմայաճազ
իտի :

Պաշգալարտա տէրլէր քիլիսայա կիտէր-
սէն, պէնիմ քիլիսայա կիթմէյէ գարշը հիչ
պիւր տէյէճէյիմ եօգ, լաքին էյէր սէն գանն
էտէրսէն քի քիլիսայա կիթմէք սէնի խէլաս
էտէճէք, օլ զէման եանլը էօլտասըն : Գիլի-
սա սանա անճազ սէմայա կիթմէնին էօլունու
կէօսթէրմէք իսթէր, քիլիսա պաշգա պիւր շէյ
եափամազ, օ էօլու սէն քէնտին կիթմէլիսին :

Չօղլարտա տուա էտէրսէն տէրլէր, տուա
էթմէք չօգ էյի տիւր վէ չօգ աճքնըրըմքի չօգ-
լար տուա էթմէյի պրազմըշտըրլար, լաքին
եալընըղ տուա էթմէք տախի սէնի խէլաս
էտէմէք :

Էօյլէ իսէ եա քի՞մ սէմայա կիտէպիլիւր
տէյու սիւալ էտէրսին : Սանա սէօյլէյիմ
կիւն ա հ ք եա լար սէմայա կիտէպիլիւր,
էվվէթ կիւնահքեարլար : Զիրա Յիսուս Բրիս-
տոս տիւնեայա կիւնահքեարլարը խէլաս էթ-
մէք իչին կէլտի. Ա. Տիւմ. 1. 13, Ղուկ 3. 52 :

Իմտի սէն տէրսին տօղրու տրը, պիլգ հէ-
փիմիլ կիւնահքեարլարը : Լաքին պու անճազ
պիւր սէօգ, գուլանըլան պիւր էսթիլլան տըր,
մանասընը հիչ տիւշիւնմէյէրէք սէօյլէրսին :
Խայր, խայր սէն տահա պիւր կիւնահքեար
իտիլինի անլամամըշտըն վէ շունու էյի պիւ
քի անճազ կիւնահքեարլար սէմայա կիտէպի-
լիւր :

Օլ կիւնահքեարլար քի կիւնահլարը իլէ
Գողգոթայա կիթմիշլէր վէ Բապպ
Յիսուսա իգրար էթմիշլէր, օլ կիւնահքեար-
լար քի Անտէն աֆվլըգ թալէպ էթմիշլէր,
Օ տա անլէրէ աֆվլըգ վէրմիշ տիւր : Անլէր
սէմայա կիտէճէքլէր : Լաքին քէնտի քէնտինի
աղլը պաշընտա վէ տինտար սայըպ, հազիգա-

թէն խէլաս իչիւն հիչ պիւր վազթ Բրիստոսա
կէլմէմիշ օլան քիմսէլէր պիւր կիւն սէմանըն
զափուսունու պիւրուտէ եէրէ չալաճաղար :
Թէրճէմէ

«ԻՆՁ ԵԿՈՒՐ ՅՈԳՆԱԾ»

«ԱՆԽԱՐՀ ԵԿԱՅ» Երգին ելումակով կրնայ երգուիլ

Գ ութով լի եւ սիրով համակ,
Ի՞նչ քաղցրը ձայն մ'առի հիմակ,
Որով կ'ըսէր սիրով վսեմ,
«Ինձ եկ յոգնած» Ահա հոս եմ :

Է՞ր տնտնաս աչքըդ յառած,
Ահա տես զիս, բազկատարած,
Խաչին վրայ, քեզ կ'սպասեմ,
«Ինձ եկ յոգնած» Ահա հոս եմ :

Ո ըպէս առու իմ աչքերէս,
Տաք տաք արցունք վաղեց երեսս,
Փարեցայ ա՛հ Փրկչիս խաչին,
Յանձնուելով իմ Արարչին :

Ր ապառնուոյս այդ վրճիտ ճակտէն,
Երկու շիթեր լոկ թող ցայտեն,
Հոգւոյս վրայ՝ մեղօք յոգնած,
Սուրբ արիւնէդ կ'ըլլամ հանգչած :

Գ ողգոթայէն վեր բարձրացող,
Փրկչէս խնդրածս՝ իմ երկու ցօղ,
Սրսկել հոգւոյս՝ սուրբ արիւնէն,
Ընդունեցի : Ա՛րդ փա՛ռք իրեն,
Ամէն :

22 Յուլիս 1927
Մարտի

Գ. ԶԱՔԱՐԵԱՆ
(Թագաղի)

(*) Այս ոտանավորը կը գնենք իբր առաջին վկայու-
թիւն մեր ծերունի եղբորը, որ իր կեանքի աշնան մէջ իր
Տէրը գտած, ամեն օր Ամար ուրախութեամբ կ'ապրի :
ԽՄԲԳ.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

— 000 —

ԱՆՏՐՈՍ ՕԼՍԸՆ Շուէտայի Սուրբ գրածախը.—

Անկից գրեթէ տարի մը առաջ ուրախութեամբ ունե-
ցանք լսելու Սր. գրածախի մը մասին, որը Պօլսոյ Բերաշի
փողոցներուն մէջ կամ Կալամայի կամուրջին վրայ
իր պալուսակին վրէն կեցած, երկու ձեռքերը պա-
հարաններով լեցուն, կ'աղաղակէր «ԱՆԱ ԿՈՒՄԱՆ ՄԷՔ.
ԹՈՒԱՅ» «ԱՆԱ ԿՈՒՄԱՆ ՄԷՔ ԹՈՒԱՅ», (Աստուծոյ նա-

մակ) : Բոլոր անցյալները զարմանքով կը դիտէին այդ խարտեաշ երկաթաարդը որ պատրաստ էր պահպանները, Աստուծո՛վ էր ան այդ նամակը, ծրիագէտ իւրաքանչիւրին երկնցնելու : Շատ շատեր կ'առնէին եւ կըսէին բանալով անոր պարունակութեան վերահաս ըլլալ : Աստուծո՛վ էր ան նամակները պարզ աւետարաններ էին : Կ'ըսուի թէ Թուրք ուստիկանութիւնը արգելեց անոր ծրի նամակներ բաշխելը, առարկելով թէ կրօնական բրտականտ մը կը նշանակէ սա : Օլըն պարտ էր ծախել զանոնք : Այսպէս Օլըն կըրցած էր դեռ մի քանի ամիս Պօլսոյ զանազան կեդրոններուն ու Թաղերուն մէջ Աստուծոյ խօսքը քաջարար տարածել :

Մեզի պատահողը, որ Ամերիկացի միսիոնար մըն էր, զարմանքով եւ սքանչւոյտով կը խօսէր, այն սիրտն մասին որ այս մարդուն սրտէն կը բլլէր հանդէպ անմահ հոգիներուն :

Ասկէ երկու շաբաթ առաջ Գերմաներէն միսիոնարական Թերթի մը մէջ կարդացինք թէ Օլըն մեռած է եղեր տարւոյն սկիզբը :

Մեր ընթերցողներէն, անոնք որ կը հետաքրքրուին Թուրքիոյ իսլամներու միսիոնարութեամբ, Թերեւս ուրախութեամբ լսած են Օլընի գործունէութեան մասին, իսկ անոնք որ տակաւին անտեղեակ են այս մարդու մասին, կը փափաքինք հետեւեալ տողերով Տէրօջը այս վաղաժամուկ ծառային մասին տեղեկագրել :

Օլըն Շուէտացի գիւղացիի մը զաւակն էր գրեթէ 29-30 տարեկան, իր մանկութեան հասակին ապաշխարած եւ այն ժամանակէն սկսեալ Տէրօջը հետ սերտ յարաբերութեամբ ապրող պատանի մըն էր, որուն սրտին մէջ կանուխէն արթնցաւ ինքզինքը բոլորովին Տէրօջը նուիրելու փափաքը : Այս պատճառաւ Գերմանիա անցաւ եւ հին գոհմանալով ամենապարզ ծառայութիւններով ինքզինքը խոնարհութեան վարժեցուց : Հօրը մահուանէն վերջը, փոխանակ իրեն Թուրքացի ժողովուրդէն արտեղ հերկելու, վերէն աստուածային կոչում կը ստանար, ծախել իր բոլոր ինքըր եւ այդ մեծ դրամագլխով, ամէն լեզուէ Սք. գրքեր առած անձամբ ցրուել ժողովուրդներու : Այսպէս 1920 ին Շուէտէն Տարբայ ելաւ, եկաւ Գերմանիա (Պերլին), յետոյ Աւստրիա, Չեխո Սլովակ, Հունգարիա, Սերպիա, Պուլկարիա եւ վերջապէս երկու տարիէն հասաւ Ռումանիա : Հոս Թշնամութիւն եւ հալածանք կը սպասէր իրեն : Ձրի տրուած Սք. գրքեր եւ Սք. գրոց մասերը թէպէտեւ ժողովուրդին մեծամասնութենէն ուրախութեամբ եւ շնորհակալութեամբ կ'ընդունուէր, այսուամենայնիւ պետական շրջանակներու եւ Օրթոտոքս քահանաներու կողմէ մեծ կասկածով կը դիտուէր : Մարդիկ նոյնիսկ կը կասկածէին թէ Օլընի ետեւ քաղաքական ոյժ մը կը ծածկուէր որ Թերեւս օր մը իրենց գործերուն միջամուխ կրնար ըլլալ : Օլըն յաճախ բանտարկուեցաւ երբեմն շարժանքներով, բայց արձակուելուն պէս, ինչ փառաւոր գործն էր որ ձեռք կ'առնէր : Աշխատեցաւ մամուլաւորապէս Պետարայիոյ մէջ, ուր նա ամենէն օրհնարներ գործունէութիւնն ունեցած է, մանաւանդ հրէաներուն մէջ : Ռումանիայէն աքսորուած քիչ վերջ Պուլկարիոյ վրայէն 1926 Յունիսին Պօլիս հասաւ : Պօլսոյ մէջ չորս ամսուան գործունէութենէ

մը յետոյ անցաւ Պրուսա, ուր Նոյեմբեր 10 ին Թիֆթե րոնուած Թրքական հիւանդանոց փոխադրուեցաւ : Մինչեւ Յունվար 1927 մնաց հին լսու ինձամբ ստանալով : Բայց հազիւ դուրս ելած Թրքաստանի րոնուելով 22 Յունվարին մեռաւ : Օլըն Տէրօջը այդ հաստատրիմ ծառան : Օլըն թէեւ միայն նախնական գիտութիւն մը ունէր բայց եւ այնպէս մասնաւորապէս օժտուած էր լեզուներ սորվելու կարողութիւններով : Իր մայրենի լեզուին չափ գիտէր Գերմաներէնը, սորվեցաւ Նաեւ Պուլկարիէն, Ռումաներէն, Անգլիերէն եւ Թուրքերէն : Հրէաներու հետ ունեցած խօսակցութիւնները երրայերէն լեզուով կը կատարուէր : Անիկա հրէաներուն բարեկամն էր : Սք. գրքեր ծախելու ժամանակ իր բարեացակամութեամբ եւ սիրալիր վարուելակերպով ամեն մարդ իրեն կը լաշէր :

Անիկա մամուլաւոր կարեւորութիւն կուտար անձնական յարաբերութեան, եւ մտերիմ խօսակցութեան, այնպէս որ ոչ միայն հրէաներուն վկայեց, ցուցնելով անոնց թէ իրենց սպասած Մեսիան Քրիստոսն է, հապա նաեւ շատ մը Թուրքերու ալ այս անձնական յարաբերութեան միջոցաւ, շատ մօտ գնաց, անոնց յոգնած եւ վիրաւոր հոգիին ցուցնելու ճշմարիտ սպեղանին — Խաչեալ Յիսուս Քրիստոսը : Կերպ մը, որ դեռ քիչ միսիոնարներէ գործածուեցաւ Թուրքիոյ մէջ եւ որ մահմետականներու համար ամենաշարմար կը նկատէր Օլըն :

Մինք ալ այնպէս կը կարծենք թէ Օլըն Թուրքիոյ իսլամները միսիոնարելու ճշմարիտ եղանակը գտած էր, զոր նկատի առնելու են ներկայ հանրապետութեան մէջ աշխատող միսիոնարներ : Իսլամը մտաւորապէս զարգացնելէ առաջ եւ աւելի, անոր սրտին ու խղճին մօտենալու է, եւ սրտի զգացումները ուղիղ ճամբու մէջ դնել ջանալու է :

Օլըն նոյնիսկ Թուրք հանրապետութեան նախագահին, Մուսթաֆա Բէմալ վաշային ալ ուկեցած եւ կաշեկազմ Ս. գրքը մը նուիրած է ինդիւրելով անկէ կարդալ, այս մասին բարեկամէ մը աղօթք կը խնդրէր : Աւետարանի գործն է լուսաւորել — երանի՜ անոր որ այդ լոյսէն չխրաւիր :

Զօրութիւնով չէ եւ ոյժով չէ հապա իմ հազարու է կ'ըսէ Զօրաց Տէրը :

Օլըն մեռած է, իր գործը դեռ կը մնայ, աղօթենք որպէսզի Տէրը ուրիշ մը կամ ուրիշներ արթնցնէ Թուրքիոյ Մահմետականներու մէջ նոյն գործը շարունակելու :

ԲԱՆԲԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Բանբերի 7րդ Թիւը երբ կ'ընդունիք, հաճեցէք մտաբերել թէ արդեօք Ձեր այս տարուան բաժնեգիրը դրկած էք, եթէ ոչ հաճեցէք այդ պղտիկ պարտականութիւնն ալ կատարել, վասնզի Բանբեր իր այսքան մատչելի գնովը մինչեւ հիմա դրամագլուխ չէ շինած, այլ իր բաժնեգներովն ու պղտիկ նուէրներովն է որ կ'ապրի :

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպգր. Ա. Երեցեան, 40, Բիւ տէ Տօմինիքէն - Մարտի